

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուրիարիոյ համար


Տարեկան Ծրք 10

Վեցամսեայ » 5

ԿԱՆԽԻԿ

20

ՅԱՆՎԱՐ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան Ծրանք 12

Վեցամսեայ » 6

ԿԱՆԽԻԿ

20

ՅԱՆՎԱՐ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ճարար օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիս: Երկու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիս:
Չհրատարակուած գումարն ինչ ևս չսրմի:

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՀԱՅԵԼԻ»-Ի

ԽԱՍԳԻՆԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Կ. Պոլիս 23 Յունիս

Բարեկամ:

Թէ ցամաքի և թէ ծովի ճամբով Պո-
լիս հասնող Եւրոպացի զբօսաշրջիկներ, ո-
րոնք անմեղ խառնակոյտներուն կերած սոս-
կալի ջարդին նկարագրութիւններէն զգած-
եալ էին արդէն, անպատճառ անգամ մը
խառնակ երթալով՝ շրջապընի, Պատէմի-
քի, Եէնի—մահալլէի ու Բարմազ գաւուի
հայոց ամայացեալ թաղերը աչքէ կ'անցու-
նեն և յուշատետրերնուն մէջ կը նշանակեն:
Սոյն թաղերուն տունները մեծաւ մասամբ
գոռ և պատուհան չունին, իսկ Պատէմիքի
տուններուն տախտակամածներն անգամ վեր-
ցուած են, թէև կողոպուտէն ետքը կառա-
վարութիւնը խուժանին ձեռքով կործանուած
այդ գոռները ու պատուհանները խրջօր
խալալ նորոգել առած էր՝ բայց գիշե-

րային գողեր՝ մէկ կողմէն կը քաշին ու կը
տանին:

Եւրոպացի զբօսաշրջիկը վայ կարգաւոր
խուժանին, կըսեն թէ առջի բերան հաւա-
տալին չէ եկեր տանկ կոտորածի մը նոյն իսկ
մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած ըլլալուն:
Բայց հիմա իրողութեան առջև պրօւնին կը
խոնարհեցնեն:

Հաւատացէք թէ Պոլսեցի բնիկ թուրք
տարրին սրտին վրայ մեծ բեռ մը եղած է
խառնակի այս ամայի վիճակը. եթէ ձեռ-
քերնուն գայ՝ խառնակի հայերը գտնելով
պիտի բերեն տեղաւորին իրենց տունները, որ-
պէս զի օտարականաց քով չստորնանան:

Անցած ար երկու Եւրոպացի տիկիներ
խառնակի շոգենաւէն կամուրջ կելլեն, հոն
նաւամատոյցին վրայ իրենց ճանչոր ընտա-
նիք մը կը դիմաւորեն:

— Ո՛ւսկից կուգար, կը հարցնէ վեր-
ջիններէն մէկը, գաղիներէն լեզուով:

— Խառնակի աւերակներէն գուր ո՛ւր
կերթար:

— Նոյն աւերակները աչքէ անցունելու:

— Օ՛հ, տոկալի բան է, հարիւրաւոր
տուննր ամայի պիտի տեսնէք, որոնց բընա-
կիները անշուշտ ջարդուած են վայրենիսե-
րու ձեռքով:—

Այս խօսակցութիւնը ըսող իմ բարեկամներէս դպրոցական երիտասարդ թուրք մը ըսաւ ինձ թէ՝ «այն միջոցին ամօթէս գետինն անցնելու եղայ »:

* *

Խասպեղի աղքատ դասակարգէն Կամօսին Իւղաբեր անուն վաթսու տարեկան կինը անցեալները դեղի համար քիչ մը բաղրջուկի (էպէկիւմէճի) տերեւ ժողովելու կելնէ Գարէ աղաճիւղը. անմիջապէս մէկ քօնիքիւրտեր վրան կը յարձակին, որոնցմէ մին՝ իր գազանային կիրքը խեղճ կնոջ վրայ յագեցնել կը փորձէ, իսկ ընկերները կիսամեռ կինը քաշքշելով մինչև հայոց գերեղմանատան գլխու արծարանին առջևը կը տանին կը ձգեն: Յանցաւորը թէև կը ձերբակալուի բայց ըստ վաղեմի սովորութեան նոյն օրն իսկ ազատ կարձակուի:

Հիմա Եկեղեցւոյ շրջակայ տուններուն մէջ կը բնակին հայերը. ամեն մէկ տուն 2—3 ընտանիք կան. և հակառակ եղած ջանքերու, չեն համոզուիր իրենց սեփական տունները տեղադրուելու:

Վերոյիշեալ Իւղաբեր կնոջ դէպքը պատահելէն ի վեր հայերէն մէկը չի համարձակիր Պատէմլիքի լեռը ելնելու:

ԻԿԿՄԱԼԵՕՆ

Ի՞նչ ՊԵՏԲ Է ԸՆԵԼ

Եթէ գաղթական ազգայնոց վիճակը վեր ի վերոյ քննելու ելնենք, պիտի տեսնենք ամենայնպէս թշուառութեան մէջ շատ մը ընտանիքներ, որոնք ամէն օր Աղքատախնամի ներկայանալով՝ հաց հաց կաղաղակեն: Ի՞նչ պէտք է ընել:

Պարապ խօսքեր աղքատին փորը չեն կշտացներ. պէտք էր դրամով օգնել, զայս զգաց Աղքատախնամ ընկերութիւնը և թըշուառաց կերպիւ իւր օգնելու համար իր նպատակէն հեռու սկսաւ գոնէ արապահիկ

հացն բաշխել աղքատաց, յուսարով ազգայնոց օգնութեանը. բայց աւա՛ղ, այս ականալուած օգնութիւնը չիրազորեցաւ և ցաւօք սրտի կիմանանք որ ընկերութիւնը մօտերս պիտի ստիպուի դադարեցնել հացին բաշխումը. այն ժամն ի՞նչ պիտի ըլլայ աղքատին վիճակը, որո՞ւ պիտի դիմէ:

Անցեալ կիրակի, աստանդաշրջիկ քուրդիչ մը Եկեղեցւոյ բեմէն որոտածայն կաղաղէր թէ «ստարներէն նպաստ ուզելը ամօթ է, մերայնոց պէտք է դիմել». խեղճ Աղքատախնամն ալ մերայնոց դիմեց ու պարապ ետ դարձաւ:

Մենք վստահութեամբ կըսենք թէ տաւր քսան հայ հարուստներ հաղարէ տւելի տուուր հացի կարօտ աղքատները չեն կարող սնուցանել շարունակաբար. գաղթականաց մեծագոյն մասն ալ «զիք» է կարողութիւն հանգանակութեան մասնակցելու. վիճակին մէջ կը գտնուի, իսկ մեացած մասով և տեղացի ազգայիններէ հաւաքուելիք դրամով հոգիւ մէկ ամիս կը հոգացուին աղքատք՝ եթէ հաւաքուելիքն 90 ոսկի ըլլայ, զի Աղքատախնամը օրը 400 հաց որ բաժնէ՝ ամիսը 90 ոսկի կը կարօտի. (Թողունք բժիշկի և դեղօրէից համար վճարելիքը) այս 90 ոսկին ամսէ ամիս մինակ մերոնցմէ հաւաքել յուսալը տղայամոռութիւն է, այդ մարդիկը լորտեր չեն որ ափով ձուլ ոսկի հասցնեն. չենք կրնար ուրիշ քաղաքներու հայոց ալ դիմել, զի անոնք ալ իրենց հոգալիք աղքատներն ունին:

Ուրեմն, եթէ Եկեղեցւոյ բեմէն ժողովուրդը միշտ կուտայ կոր ըսենք՝ ալ անկէ ետքն դիմող աղքատին «դրամ» չի կայ, չենք կրնար հասկցնել. ժողովորդը ունենայ նէ պիտի տայ, միթէ ունեցած ատենը չի տուաւ. հիմա չունի, (որուն Գեր. Քարոզիչն պիտի համոզուի՝ եթէ ինքն անձամբ հանգանակութեան ելնէ.) ու քանի որ դուրսէն օգնութիւն խնդրելն ալ ամօթ է եղեր, ուրեմն ի՞նչ պէտք է ընել:

Գ.

Ռուսճուգ 26 Յունիս

Բարեկամ.

Ռուսճուգի հայերը՝ Վառնացիներէ աւելի դրական ըլլալ կերեին: Վառնաի Ազգ. վարժարանի շինութեան խնդիրը որ ի վաղուց կը յուզուի, զրգած է տեղացիքս նոյնօրինակ ձեռնարկութեան մը, որոյ պէտքը այժմ քան երբէք աւելի զգալի եղած էր: Ընդհ. ժողովով մը անցեալները որոշուեցաւ Ազգ. վարժարանի մը կառուցումը, առ առաւելն 50 հազար ֆր. արժողութեամբ, որոյ հողը տեղւոյս քաղաքապետութիւնը արդէն խոստացած է նուիրել սոյն օրինակ ձեռնարկութեան մը առթիւ: Հաւաքիչ յանձնախումբը գործի սկսած է արդէն եւ բաւական գոհացուցիչ գումար մը հաւաքած. այս հաշւով Ռուսճուգիները աւելի կանուխ նորակառոյց վարժարանի մը օրհնութիւնները պիտի վայելեն քան Վառնացիները որք հրկիզեալ վարժարանէ մը մնացեալ մեծկակ գումարի մը առաւելութիւնը եւս ունին:

Քաղաքի մէջ հրատարակուելու վրայ եզոզ փոքրադիր թերթին առաջին 4 թիւերը կարգացի. մեծ զարմանքով տեսայ իր անուան եւ պարունակութեան միջեւ եղած անհուն տարբերութիւնը: Աւելի լաւ չէ՞ր ըլլար որ Տիար Չաքըրեան իւր յուշ գաղափարները աւելի յուշ թերթի մը մէջ հրատարակէր:

* * *

ՎԱՌՆԱՅԻ ԱԶԳ. ՎԱՐՎԱՐԱՆԸ

Ուրախութեամբ կը ծանուցանեմք թէ քաղաքիս հրկիզեալ վարժարանին վերաշինութիւնը այս շաբթու սկսաւ:

100 Այցաբարտը երկու ֆրանքի կը ապագրուի: Դիմել «Հայելի»ի խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարու-

թեանց թղթատարի ծախք 30 սանդիմ՝ յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական նամակագրոշմ՝ կ'ընդունուի:



Հարց—Պատասխանի

Ի՞նչ է աղօթքը.

— Երկրաւորին դէպ ի երկնաւորը հասնելու մէկ վերելքը:

Ի՞նչ է մայրը.

— Զաւկներուն սիրովը միացող ինկաման մը:

Ի՞նչ է քնարը.

— Սրտի ձեւով ու աղիքով պատրաստուած գործի մը, որ մարդուս սրտին ու աղիքին հետ կը խօսի:

Ի՞նչ է յուսախաբուցութիւնը.

— Այրեցեալ Գօսիէն վայրկենապէս Սառուցեալ բեւեռ փոխադրուելու մարդուն մէկ երեւոյթը:

Ի՞նչ է գիրքը.

— Անցելոյն հայելին, ներկային մխիթարն, ապագային կտակն եւ ամեն տան առանձնութեան ճշմարիտ բարեկամը:

Ի՞նչ է գարունը.

— Բնութեան ժպիտը:

Ի՞նչ է ամառն.

— Երիտասարդութիւնն է հրատապ:

Ի՞նչ է աշունը.

— Հարսնացու աղջիկ մը՝ որ արգասաւորելու կը պատրաստուի:

Ի՞նչ է ձմեռն.

— Հարուստներուն հաճելի ժամանցի միջոցն, երիտասարդներու ժամագրավայրն եւ աղքատներու պատուհասն:


Ի՞նչ է պատիւը.

— Դրամագլուխներուն պատուականը:

Ի՞նչ է մարդը.

— Դրամին տառագարձութիւնը:

Թարգմ.



ԹԱԳՈՒՀԻՌՑՆ ՅՈՓԵԼԻԱՆԸ

Լոնտրայի զրօսարանի մը մէջ .

Ֆրանսացի մը, շատ զուարթ, իր բա-
ժակը վերցնելով — Թագուհւոյն կենացը :

Անգղիացի մը նոյնպէս գաւաթը վեր-
ցնելով — Շնորհակալ եմ, ճէնդլմէն :

— Ըսելէք չիկայ, Անգլիական ժողո-
վուրդը մեծ ժողովուրդ մըն է :

— Ֆրանսական աղգն ալ նոյնպէս մեծ
է, նուազ մեծ անգլիականէն անշուշտ, բայց
նորէն շատ մեծ :

— Հէօ, հէօ, շատ պատասխաններ կը
վերցնէ այդ :

— Բնաւ պատասխան չի վերցնել . . .
ձեր կենացը ճէնդլմէն . . . և ձեր Թագուհ-
ւոյն կենացը :

— Ներեցէք, Ֆրանսացիքս Թագուհի
չունինք :

— Կը ցաւիմ վրանիդ :

— Թերեւս յառաջիկային :

— Թերեւս, ճէնդլմէն . բայց ըսա իս
Թագուհի չունեցող ժողովուրդ մը երկրոր-
դական կացութեան մէջ կըլլայ . . . վերջա-
պէս, ճէնդլմէն, ց'տեսութիւն, ձեզ հետ
ծանօթանալուս երջանիկ եմ :

— Իւ ևս, ճէնդլմէն . . . կը ներէք որ
ձեր ձեռքը սեղմեմ եւ տրինկեմ անգամ
մըն ալ ձեզ հետ :

— Սիրայօժար . . . հանդեսներուն մին-
չեւ վերջանալուն պիտի մնաք :

— Անշուշտ :

— Շատ ստակ բերած էք հետերնիդ
Ֆրանսայէն, որովհետեւ թէ ապրուստը սուղ

պիտի ըլլայ կարծեմ Լոնտրայի մէջ . . .

Ֆրանսացին թղթապանակին դարնելով,

— Ա՛հ, կարեւոր գումար մը բերած եմ :

— Ուրեմն . . . (ձեռքի սեղմում մը և
Անգլիացին կը մեկնի :

Ֆրանսացին (աւտոնձին) — Քիչ մը ետե-
սէր են այս անգլիացիները բայց անտար-
կոյս մեծ աղգ . . . (կանչելով) Կարսօն, պարտ-
քըս որչափ է, (գրգանները կը խառնէ և
ձիւ մը կը հանէ) Օ՛հ :

Կարսօնը — Ի՞նչ կայ պարսն :

Ֆրանսացին — Կորոպտուեցայ՝ բա-
կահատ է եղեր . . . ոչինչ, փարա մը չէ մնա-
ցեր, փարա մը չէ ձգեր . . . (փնտռելով) Ո՛հ,
այո, ոսկի մը . . . բայց, սխալ, ոսկի չէ եղեր,
շքանշան է . . . Յօփելեանի շքանշան մը՝ զոր
դրեր է դրամապանակիս տեղը . (կարգալով)
Աստուած պահէ մեր քագուհիին :

ՆԱԽԱԿ ԵՒ ԴԵՂԱԳԻՐ

Խեծայարգի եւ պայվական եղբայր .

Ի մէջ նամակիս լէֆթ եղած նատիր իւր
էմալ թերթիպն, որս էֆէնտիմէ սեյլէյիմ
Ակնա բաղբէն Կամրկապու գիւղէն ցիցխենց
էմմիւին հէքիմարանին շիֆապախշ թերթիպ-
ներէն մէկուն սուրէթն ու միւսէվէտտէն է,
լուսաֆօդին ի կենդանութեան, եանի էֆէն-
տրմ պէրհայաթ եղած ժամանակ, աս քէմ-
թեր ծառանուդ հիպէի վահտէի ահքեամով
սա մուծիպով հիպէ վէ ինթիգալ արած լի-
նելուն, էֆէնտրմ ծառայականս ալ աս պիւ-
չիւմ միտէյի հիւանդութիւն մը ունենալուս
հըմար, մտածեցի ուր շատ շատ բարով կա-
րամիշ տըլլի աս թերթիպն . պինսէն ալէյհ
րիճա կանիւմ ուր՝ գրածներս պիրինձիւնէվէն
ըլլալու մուծիպով, աս դարիպ մէմէքէթն դըր-
կելու միննէթն անէք :

Պէնտէի


Չոր թութենց

Կողմնդ

Պատճէն Դեղագորի

Փամպոնիւս պահարիւրիւս Սէզարիքա
Սուճուքիուս պահարիւրիւս Էնկիւրիքա
Ֆոմաժիւս գաշէրիւս Պալքանիքա
Բուսսոնիւս սոլմաիքիւս Ուսկուսիքա
Օլիվամ էքսէլանթիւս Թուիլիքա
Խալեարիս մալոմաթիս Ռուսիքա

Իշխէ էֆէստում, խաբանուիս միտէի իլ-
լէթէն մուկտարրալ էդոդնէն էկէր աս թէր-
թիպին մուճիպ ուտելու ըլլան իսէ՝ միտէ—
բաց բարեխօսին առաջը մամ վառելու հա-
ճէթ չի ֆար:



ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Երիտասարդ մը, չափագէտ և վկայեալ
երկրաչափ, հմուտ այլ և այլ Եւրոպական և
Ասիական լեզուներու, դիմքով սիրուն, նոյն
իսկ ներողամիտ աչքերու համար գեղեցիկ,
մէկ խօզքով, պահանջուած բոլոր բարեմաս-
նութիւններով օժտուած, հարուստ ընտանի-
քի մը քով... փեսայի պաշտօն մը կը փըն-
տէ խոնարհաբար:

Դիմել ք... ի սրճարանը, ուր կը գըտ-
նուի առտուրնէ մինչև կէս գիշեր, կանաչ
սեղանին շուրջը:

Հետեւեալը՝ որ մեզ զրկուած է, կը հրա-
տարակենք՝ բոժոժիկի պատասխաններովը:

ԹԵԹԵՒՍՈՒԿԻ ՄԸ ՅՈՒՀԱՏԵՏՐԷՆ

Առ Օրիորդ Ֆուլֆուլ

Հրեշտակ մըն էք սիրունիկ
Որ հրապուրէք անդադար,
Միակ յանցանք մ'որ ունիք՝
Ձեզ հիացողին չէք գթար:

Բոժ. — Զէվզէիմ վար պիր գանթար:

Թէ ծաղիկներ բանայ գարուն,
Պարտէզներու մէջ համայն,
Ֆօրկէթ—մի—նօթ ծաղիկ սիրուն
Սրտիդ մէջը բացուի միայն:

Բոժ. — Օլուէթ, թօրնէհէթ թօրնիստան:

Աշխարհը ձեզ պիտի թուի
Չանձրանալի՝ անհամ ու սին,

Եթէ օրիորդ դուք՝ յիշատի

Ուզէք մընալ անամուսին:

Բոժ. — Հաւկիթ կըսեն քեդիպէսին:

Վարդի թերթերէ ունիք մի բերան,
Քաղցր ժըպիտ մը հանգչած է վրան,
Ես ալ մեղու մ'եմ, թողէք որ գոնէ
Հարսնութեան շաքար պատրաստեմանկէ:

Բոժ. — Յարիթամ վար պիր թանէ:

Ո՛հ, ի՛նչ փայլ ինչ որ լսեմ

Թռչնիկները անտառին,

Անոնց երգերն էն վսեմ,

Քու ձայնիդ քով կը սառնին:

Բոժ. — Ը՛հ, սօնտուրմային սառած խութին:

Մեամ յարգանք

ԱՆ ՊԷՆԻ

Բոժ. — Այալմ սէնի:

ԿՈՒՆՈՒԿ



ԶԲՕՍԱՆՔ



Դեղձանիկս կորուսի, ո՛ւր կրնամ գտնել:

ՎԱՌՆԱՅԻ ՄԱՅԻՍԸ

Նայուածքս առնէ պահ մը թեր
Կը բոլորի թէ վար՝ թէ վեր,

Բայց զուր ջանքն աչերուս սուր...
Մայիսը ո՛ւր, Մայիսը ո՛ւր:

Ո՛հ, աշխարհէս ա՛լ վերնայի,
Կ'ըսէ ով որ դէպ վեր նայի.

Այնքան երկինքըն է տիտուր...
Մայիսը ս՛ուր, Մայիսը ո՛ւր:

Իսկ թէ՛ սխալմամբ ան վարնայի
Սոսկմով դիտէ լոկ Վառնայի

Ցեխն առատ, տիղմըն ու ջուր,
Կ'ըսէ լալով, Մայիսը ո՛ւր...:

Զեփիւռ հեշտին, գայլայլ անուշ,
Թռչնոյն մնաց ո՛հ այնքան ուշ,

Որ ա՛լ անզուսպ, յուսակտուր
Պիտի պոռանք «Մայիսը ո՛ւր»...:

Գ. — Ա.

97, Մայիս

ԴԺԲԱՆՑ ՏԱՓԱՏ ՄԸ

Հայր մը շուկայ երթալով ինքզինքին
Համար տափատ մը կը գնէ: Տուն դառնա-
լով կը փորձէ գայն, և կը տեսնէ որ չորս
մատի յաւելական երկարութիւն մը ունի:

Արդէն ուշ ըլլալով և խանութը գոց,
ետ տալը անհնարին էր. միւս կողմէ հե-
տեւալ առտուան համար ստիպողական պէտք
ունէր նոր տափատով իր սրունքները զար-
գարելու. ուստի աղջիկանը գիմեց:

— Զաւակս, ըսաւ, սա տափատս չորս
մատ կարճուր, կէս ժամու գործ է:

— Չեմ կրնար հայրիկ, անկարելի է,
հազիւ շրջագգեստիս կրնամ հասնիլ. թող
մայրիկը ընէ:

Դժբաղդաբար մայրը բարկացած ըլլա-
լով մէկ խօսքով մերժեց. իսկ մեծ մայրը իր
աչքերուն տկարութիւնը մէջ բերելով, այն
ալ հրաժարեցաւ:

Խեղճ մարդը ամեն կողմէ մերժուելով,
սրտովեցաւ եւ գնաց պառկելու: Իրեն հե-
տեցանքիչ ատենէն նաեւ երկու մայրերը:

Կէս գիշերին, շրջագգեստը աւարտելէ
ետքը, դեռատի օրիորդը խղճի խայթ մը ըզ-
գալով, ուզեց հաճոյալի անակնկալ մը հայ-
թայթել հայրիկին և տափատը չորս մատ
կարճեցնելով տեղը կախեց ու գնաց անկո-
ղին մտաւ:

Քանի մը ժամ՝ վերջը, կնոջ բարկու-
թիւնն ալ կերեայ թէ անցած ըլլալով ելաւ
եւ ամենայն ջերմեռանդութեամբ ան ալ նոյն
գործողութիւնը կատարեց:

Իսկ առաւօտեան դէմ, երբ մեծ մայ-
րիկն ալ ուզելով փեսին հաճոյք մը պատ-
ճառել, թուարանկան ճշդութեամբ մը,
դարձեալ չորս մատի կրճատում մը գոր-
ծադրեց. խեղճ տափատը այնքան համառո-
տեցաւ որ ալ հազիւ մանկան մը պիտի յար-
մարէր...:

Հետեւեալ առաւ և երբ հայրիկը նոր տա-
փատը հագած ու կրակ ու բոց կտրած ըն-
տանեկան սենեակն իջաւ, տիկինները եւ օ-
րիորդը ո՛ր գունդէն փախչելնին չի գիտցան:

ՕԳՏԱԿԱՐ ԽԲԱՏՆԵՐ

Ճանճերը ոչնչացնել.

60 կրամ՝ րէչինա, 10 կրամ՝ ուր (պէք-
մէզ) ու 10 կրամ՝ ձիթաիւղ. ասոնք եփելով
մածոյց (մաճուն) մը կը շինուի, զոր փայտի մը
վրայ քսելով՝ սենեակին մէջ կախելու է. ճան-
ճերը կուգան վրան կը փակչին ու հոն կը
մնան:

Երկրորդ կերպ մ'ալ:

Եթէ գեղկանեփայտ (րիսէն) կոշուած
ծառատունկն թաղարի մէջ առած սրահի կամ
խուցի մէջ գրուի, ուր անհամար ճանճերու
բազմութիւն կայ, մէկ քանի օրուան մէջ ա-
նոնց հետքը չի մնար:

Երրորդ և խնայողական կերպ մ'ալ.

Իրիկուան դէմ առաստաղին վար կա-

խելու է (սէօիւտ)ի ճիւղերէ փունջ մը ,
ճանճերը անոր վրայ կը թառին . ուստի
մուծը կոխելուն պէս՝ այդ փունջը լաթով
մը կը ծածկէք եւ անմիջապէս ջուրը կը
ձգէք :



Այր եւ կին

Կէորդ աղա, աստարի վառնային պէ-
տէհավա ծովը կտար ես, արթըխ ամեն օր
մտիր :

— Ինչ ընեմ կնիկ, աս ալ ասանկ
փրսանդ մըն է :

— Էյ ֆայտա մը կը տեսնաս կոր .

— Էհ իշթէ, հէլպէթտէ պիտի տես-
նանք :

— Պարէ լողալ սորվեցա՞ր .

— Կնիկ, ատոր դուն ալ զարմացիր՝
ես ալ . պարտքին մէջ ամէն օր կը լողամ
կոր տէ՛ ինչ կըսես, պիր թիւրլիւ ծովին մէջ
չեմ կրնար կոր ուշտուրել :

Երկու բարեկամուհիք

Աս մէկ քանի օրս ո՞ւր էիք :

— Կնքամօրս տղուն հարսնիքը գացինք :

— Էյ անանկ է նէ աշփիդ լուս . տա-
ռօսը չիթթէներուդ :

— Շնորհակալ եմ :

— Չըսե՞ս, աղէկ էլէնճէ ունէիք .

— Չէ՛, հոգիս, չէ, հաթտա սիրտ չու-
նինք ըսելով հիչ չըխտըմ մը չըրին . ճա-
հիլներուն պիլէ չի ձգեցին խաղալու :

— Հէլպէթտէ հարսը օլսուն մէջ մը
խաղցուցին :

— Հարս խաղցունելը հիմա պարիթ
է, փեսայ կը խաղցունեն կոր :

— Ատանկ բան կըլլա՞յ :

— Ինչո՞ւ չըլլար, տղուն՝ տահա ըս-
թամպօլն իբէն իծծուն օսկի տալու խօսք են
տուեր, ասօր կուտանք վաղը կուտանք ըսե-
լով տիեօր հիմա կը խաղցունեն կոր :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 12

Գիրք մը ունիմ որ գրուած չէ,
թէ չի կարդամ՝ նա զիս կանչէ .
ինք դատաւազ ինքն ամբաստան,
ինք դատաւոր, ինքն է վկայն :

Թիւ 11 Հանելուկն էր Տապալի (Թավ-
լու : Լուծեց Սիլիսիւրէէն Տիար Կարապետ Յ.
Ակաբի :

ՆԿԱՐՀԱՆՈՒԿ ԹԻԻ 4



Ք յ ա ր Յ Լ Գ ա մ

Թիւ 3 Նկարհանուկը կարդալ այսպէս .
«Ազգասէրը կաղախանի եւ մահի կամովին
կը դիմէ» :

Վ. Քիւչիւքեան :

Գիտական Զրույն



Հրջանակները կը դառնան

Այս զուարճարի փորձը կատարելու համար այն թերթը սեղանի մը վրայ դրէք ու աջ ձեռքի ցուցամատերնիդ պատկերին մէջի ճերմակ միջոցին վրայ գնելով՝ ձախ ձեռքով թերթը շրջանակաձև երեքցուցէք, առանց սակայն աչքերնիդ այն շրջանակներուն վրայէն վերցնելու։ Այսին տեսէ՛ք որ շրջանակները կը դառնան, ու որչափ որ թերթը արագարար շարժէք՝ շրջանակներն ալ այնքան շուտ կը դառնան։

Ահաւասիկ տեսողութեան պատրանքի զուարճարի մէկ փորձը։

ԿԱԼՎԱՆԻՍԹ

ՕՆՆԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Ամեն տեսակ տպագրական կաղապարներ պատրաստող, նաև թէ՛ անձնական և թէ՛ առևտրական կնիքներ։ Գիւմել ի Վարնա շիրինկերէր փողոց թիւ 561։

Գին գոհացուցիչ։

6—12

ԱԶԴ

ՏՕՐԹ, Ե. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ վերագործած է Ոսֆիաէ և կընդունի հիւանդներ ամեն օր իր տունը ի Պալըզ Բազար, առաւօտները ժամը 10էն 12, իսկ կէս օրէն վերջը 2էն 5։ Զորեքշաբթի օրերը կէս օրէն վերջը ժամը 2էն 5 ճրիապէս կը դարձանէ։

8—10

Այցեւորման, հասցէտոստ. նամակագրութիւն, հրաւիրատուն, բարենիշ, տոմսակ, ևայլն ևայլն թէ՛ պարզ և թէ՛ սակեղօծեալ մէկ քանի գոյներով կը տըպագրուին։ Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին։ Գին գոհացուցիչ։ Գիւմել հասելի խմբագրութեան։



ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԵԼԱՆ



(ՊՈՒԼՊԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆԶՈՒԳՎԱՆԱ ՏՐԴ ԹԱՎ ԵԼՄԵՂ ԹԱՎԻԱ

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաև շոգեմակոյղներ, ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթեայ գործիքներ, դրամական գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ ևայլն ևայլն կը պատրաստուին։ Պատ. Յաճախորդք միշտ գոհ մնացած են այն գործարանի շինութիւններէն։

Отговоренъ редакторъ: Н. Драгулевъ
Печатница „Взаимность“ — Варна